

# Այունյաց երկիր

ՀՈՐԵԶՆԱԲԵՐ  
4 ՓԵՏՐՎԱՐԻ 2015Թ. №3 (346)  
www.syuniacyerkir.am

**Բոլոր գոյերի սկիզբն  
Ասված է, ամենայն  
բարիքի սկիզբը՝  
սեր, եւ բոլոր  
շնորհների սկիզբը՝  
խոհականությունը:**  
ՍՈՒՐԲ ԶՈՎԿԱՆ ՈՐՈՒՄՆԵՐԻ



## Ամփոփվեց 2014 թվականը

**Տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունների միացումից հետո առաջին անգամ ՀՀ ՏԿԱԻ նախարարության Սյունիքի տարածքային ստորաբաժանումները հանդես եկան կարգադրի հաշվետվությամբ. հունվարի 26-ին Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ 2014թ. աշխատանքների ամփոփումը:**

Ողջունելով նիստի մասնակիցներին՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը նշեց, թե քանի որ այժմ գործում են մեկ նախարարության կազմում, այսուհետ առավել արդյունավետ կլինեն մարզպետարանի համագործակցությունն ու համատեղ աշխատանքն արտակարգ իրավիճակներում մարզը սպասարկող կառույցների հետ:

Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Արթուր Հարությունյանը թվերի եւ փաստերի լեզվով ներկայացրեց անցած տարում իր ղեկավարած ծառայության կատարած աշխատանքները՝ նշելով նաեւ, թե ինչ են նախատեսում անել 2015-ին:

Ասեմք, որ 2014թ. Սյունիքի մարզում գրանցվել է 557 արտակարգ դեպք՝ 2013-ի 435-ի դիմաց. դրանց հետեւանքով զոհվել է 26, մարմնական վնասվածք ստացել՝ 87 մարդ, օգնություն է ցուցաբերվել 480 մարդու: Այսպիսով, մարզում արտակարգ դեպքերն աճել են 122-ով, զոհերի թիվը՝ ավելացել 10-ով, վիրավորներինը՝ 15-ով: Վարչության համար այս տարի ամենախոշոր արտակարգ տեխնածին դեպքը Կապանում բնակելի շենքի կողքով անցնող ջրատարի պայթյունն էր, որը 120 մլն դրամի վնաս է հասցրել բնակչությանը:

Սյունիքի մարզային հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության պետ Միշա Խաչատրյանը հայտնեց, որ 2014թ. իրենք հրդեհատեխնիկական հետազոտություններ են իրականացրել սպասարկող տարածքի 907 օբյեկտում, այդ թվում՝ Կապանի եւ Ագարակի կոմբինատներում: Դրանց արդյունքում կազմել են կարգադրագրեր, համձեռվ օբյեկտների ղեկավարներին՝ թերությունները վերացնելու համար: Ստուգվել է 24 օբյեկտ, գնահատվել՝ 903 օբյեկտի անհատական ռիսկայնությունը: Հրդեհային անվտանգության կանոնների խախտման կամ չկատարման համար 46 անձ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ տուգանքի ձեւով՝ 1 մլն 705 000 դրամի չափով:

Անցած տարվա իրենց աշխատանքներն ամփոփեցին նաեւ «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայության» եւ «Սեյսմիկ պաշտպանության արեւելյան ծառայության» (Արցախ) ղեկավարները: Նրանք ներկայացրին նաեւ տարածաշրջանի սեյսմիկ ռիսկերն ու իրենց խնդիրները:

Հարավային ծառայության ղեկավար Ստեփան Բաղդասարյանի տեղեկացմամբ 2014 թվականին Սյունիքում գրանցվել է 245 երկրաշարժ:

«Հայաստանի հիդրոօդերևութաբանության եւ մոնիտորինգի պետական ծառայության» մարզային համակարգող Ժ.Գեւորգյանը ներկայացրեց, թե նախորդ տարի որ կառույցներն ինչ ծառայություններ են մատուցել: Հայտնեց նաեւ, որ «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության հետ պայմանավորվածության համաձայն, ձեռնարկությանը մատուցած հիդրոմետ ծառայության դիմաց, թանկարժեք օդերևութաբանական ավտոմատ կայան ձեռք բերելու պայմանավորվածություն ունեն, որը շուտով կտեղադրվի մարզում: Երբ պարոն Գեւորգյանի ելույթից ՀԱՐՈՒՄՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ էՑ 3

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «Մենք մեզ վերապահում ենք կանխարգելիչ հարվածներ հասցնելու իրավունք»

### Նոր իրավիճակ

«Մենք պատերազմ հրահրելու որեւէ պատճառ չունենք», - այդ մասին հայտարարել է նախագահ Սերժ Սարգսյանը, ով ՊՆ վարչական համալիրում մասնակցել է պաշտպանության նախարարին կից կոլեգիայի եւ հայկական բանակի կազմավորման 23-րդ փարեթարձին նվիրված հանդիսավոր նիստում:

«Մենք պատերազմ հրահրելու որեւէ պատճառ չունենք: Մենք ինքներս միջադեպեր չենք հրահրում: Դուք դրա մասին շատ լավ գիտեք: Եվ մենք երբեք նախատարձակ չենք լինում: Դա մեզ պետք չի բնավ: Սակայն մեր հանդեպ ձեռնարկված ցանկացած միջադեպի հետեւել եւ հետեւելու է հատուցման գործողություն: Մինչեւ վերջերս մեր ձեռնարկված պատասխան գործողությունները եղել են սիմետրիկ իրենց ձեւով եւ սիմետրիկ՝

ավելի մեծ կորուստներ հասցնելու առումով:

Այսուհետ կարող են տեղի ունենալ նաեւ ձեւով սիմետրիկ հատուցման գործողություններ: Տարզուխները բազմաթիվ անակնկալների պիտի սպասեն: Ավելին, մեր սահմաններին եւ շփման գծի երկայնքով ավելի մեծ եւ սպառնալից կուտակումների պարագայում մենք մեզ վերապահում ենք կանխարգելիչ հարվածներ հասցնելու իրավունքը», - նշել է նախագահը:

Ըստ Սարգսյանի՝ թող ոչ ոք չմտածի, որ մենք ձեռքներս ծալած սպասելու ենք, թե երբ է արհավիրքը մտնելու մեր տուն: «Մեզ համար արհավիրք պատրաստողի հանդեպ մենք պարտավոր ենք լինել անողորմ: Կրկնում են՝ դիմացինի արկածախնդրությունը կտիպի մեզ զնալ անդառնալի վնասների հասցման ճանապարհով:

Մենք հասկանում ենք, որ Արրբեջանի իշխանությունները պատրաստ են անխնայ կերպով մահվան բերան ուղարկել իրենց հարյուրավոր եւ հազարավոր քաղաքացիների՝ միայն թե իրենց աթոռները լինեն պաշտպանված: Բայց մենք չենք կարող հանդուրժել, որ դա կատարվի մեր քաղաքացիների կյանքերի ՇԱՐՈՒՄՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ էՑ 2

## Ժամերգություն եւ գովաբանական աղոթք՝ ուղղված Սուրբ Զովհան Որոտնեցուն՝ ծննդյան 700-ամյակի կապակցությամբ

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի եւ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի նախաձեռնությամբ հունվարի 29-ին Որոտնավանքի Սուրբ Կարապետ եկեղեցում տեղի ունեցավ ժամերգություն եւ գովաբանական աղոթք՝ ուղղված Սյունյաց աշխարհի բոլոր ժամանակների ամենաճանավոր գավակներից մեկին՝ Սուրբ Զովհան Որոտնեցուն՝ ծննդյան 700-ամյակի կապակցությամբ:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ

ի գլխավորությամբ անցկացված ժամերգության ու գովաբանական աղոթքի ընթացքում, մասնակցությամբ հարյուրավոր սյունեցիների, մարդիկ իրենց աղոթքով խնդրում էին Սուրբի բարեխոսությունն առ Աստված, որ Տերը խաղաղություն եւ ստեղծագործ աշխատանքի հնարավորություն պարգևի Հայոց աշխարհին:

Աննախաղեպ միջոցառման եւ օրը, եւ վարդ պատահական չէին ընտրվել: ՀԱՐՈՒՄՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ էՑ 4



Սուրբ Զովհան Որոտնեցի, մանրանկար

# Ձմեռային զորակոչը՝ կազմակերպված

## Սիսիան

Հանրապետությունում հունվարի 8-ից մեկնարկել է հայոց բանակի ձմեռային թարմացման գործընթացը: Սիսիանի տարածաշրջանից զինակոչվողների առաջին հավաքը հանրապետական հավաքական է մեկնել հունվարի 10-ին: Խորհրդանշական է, որ հայրենիքի ապագա պաշտպաններն իրենց երկրին տղամարդավարի ծառայելու առաջին պատգամները ստանում են զինկոմիսարիատի պուրակում վեր հանող Արցախյան գոյամարտի մասնակից, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի արժանացած (հետմահու) քաջ վաշտապետ Վուրգ Ոսկանյանի հուշարձանի մոտ: Ավանդույթ է դարձել, որ զինակոչվողներին բանակ են ճանապարհում Սիսիանում տեղակայված զորամասից հրավիրված զինվորական նվազախմբի մեղեդիների ուղեկցությամբ, բարենաղթանքի խոսքերով: Սիսիանի տարածաշրջանային զինկոմ, փոխգնդապետ Մինաս Սկրտչյանը համոզմունք է հայտնում, որ այս զորակոչին ես կկատարվի հանրապետության զինկոմիսարիատի նախնաձած պլանառաջադրանքը: Առողջության հետ խնդիրներ ունեցող զինակոչվողները հետազոտվել են մայրաքաղաքի կլինիկաներում: Ձինկոմից էլ հետաքրքրվում ենք, թե զինակոչվողները



Մինաս Սկրտչյան, Սիսիանի զինկոմ

րի շրջանում որ հիվանդություններն են տարածված: Անցել են ժամանակները, երբ որոշ երիտասարդներ խուսափում էին սահմանադրական պարտքը կատարելուց, բայց ահա ոմանց առողջական վիճակն անհանգստանալու առիթ է տալիս: Տարածում ունեն սրտի արատներ, ոմանք տեսողության խնդիրներ ունեն, երիկանների հետ կապված խնդիրը զինկոմը կապում է Սիսիանի խմելու ջրի հետ: Ձինակոչվողները տարվեցին մի քանի ամիս առողջությունը վերականգնելու համար, բայց ահա մանկուց հաշմանդամը միանշանակ

ազատվում է զինվորական ծառայությունից: Պատահել է, ծնողը դիմել է երկրորդ անգամ է զինկոմիսարիատն ուղարկել հետազոտման՝ մինչև ծնողը համոզվի, որ իր զավակը պիտանի է ծառայության կամ տեւական բուժման կարիք ունի: Ձրուցակիցս զորակոչի հետ կապված թվեր չհրապարակեց, բայց ահա զինակոչվողների ֆիզիկական ցածր պատրաստակամությունը պայմանավորեց դպրոցում ֆիզդաստիարակության ցածր մակարդակով եւ այն, որ պատանիները խուսափում են ֆիզիկական աշխատանք կատարելուց: Փոխգնդապետ Մինաս Սկրտչյանը, ով, ի դեպ, երկու պատերազմ է տեսել՝ Աֆղանականը եւ Արցախյանը, կարելու է վարժապետների դերը եւ հավելում՝ ոչ մեկը մեր փոխարեն սահմանը չի պաշտպանելու: Ցավոք, սահմանից մեզ հասած լուրերը պատերազմական հարդրագրություններ են հիշեցնում: Ձրուցակիցս պատմեց, երբ անցած տարվա օգոստոսին սահմանում իրավիճակը սրվեց, կռված տղերքը մի մարդու մեան պատրաստակամություն հայտնեցին՝ խրամատում կանգնել երիտասարդ զինվորի կողքին: Ավաղ, հակառակորդի դիպուկահարի դավադիր գնդակը երբեմն խոցում է մեր սահմանապահին: Տխրեցնող փաստ իմացանք. անցած տարի Սիսիանի տարածաշրջանից բանակ զորակոչված երիտասարդներից երեքը հակառակորդի կրակին զոհ է գնացել՝ շարքային Կարեն Գալստյան (Սիսիան), կրտսեր սերժանտ Արթուր Օհանջանյան (Բնակոթ), շարքային

Գրիշա Խաչատրյան (Սառնակունք): Կռված տղաների շրջանում որոշակի նեղացածություն կա, որ իրենց սոցիալական վիճակը դժվար է բարելավվում: Մինաս Սկրտչյանը ես այն կարծիքին է, որ Արցախյան պատերազմի մասնակիցները պիտի ուշադրության կենտրոնում լինեն, մարդ կա, որ Ույնիսկ ապահովված չէ բնակարանով: Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը Արցախյան պատերազմի մասնակիցներից մեկին, ով վեց երեխայի հայր է, պատրաստակամություն է հայտնել տնով ապահովել, ավելի ստույգ՝ ազատամարտիկը որեւէ գյուղում տուն պիտի գտնի, իսկ մարզպետը կտրամադրի դրա գինը: «Տեսեք, մի հարց լուծման փուլում է, աստիճանաբար մնացած հարցերն էլ կլուծվեն: Պիտի պետության հնարավորությունն էլ հաշվի առնես», – ասում է զրուցակիցս: Մայիսի 9-ին լրանում է Մեծ հաղթանակի 70-ամյակը: Գնալով նոսրանում են երկրորդ աշխարհամարտի մասնակիցների շարքերը: Մ.Սկրտչյանը տեղեկացնում է, որ Սիսիանի տարածաշրջանում Մեծ հայրենականի ռազմադաշտերում կռվածներից մնացել է 21 վետերան, ովքեր հարգանքով են շրջապատված: Մայիսի 9-ին վետերանները հյուրընկալվում են Սիսիանում տեղակայված զորամասում, նրանց հուշավերքեր են հանձնվում, բարենաղթանքի խոսքեր են հնչում, իսկ վետերանները սպաներին, երիտասարդ զինվորներին դրվագներ են ներկայացնում երկրորդ աշխարհամարտից: Թեպետ Աստծո ամեն օր Մեծ հայրենականի մասնակիցներն ուշադրության կենտրոնում

պիտի լինեն: Ձինկոմիսարիատների վրա է դրված ռազմական ուսումնարանները կարողանալ ապահովելու խնդիրը: Տեղեկացնենք, որ տարեկան չորսհինգ երիտասարդ Սիսիանի տարածաշրջանից ցանկություն է հայտնում զինվորական մասնագիտություն ստանալ՝ հիմնականում Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում: Նախկինում սպա դառնալ ցանկացողները շատ ավելին էին: «Իսկ զինկոմիսարիատը հետաքրքրվում է Սիսիանից զորակոչված պատանիների ճակատագրով» հարցին զինկոմը պատասխանեց, որ զորամասերից շնորհակալական նամակներ են ստացվում, ինչից էլ տեղեկանում են սիսիանցի երիտասարդների օրինակելի ծառայության մասին: Փոխգնդապետ Մինաս Սկրտչյանը նաեւ շնորհակալական խոսք ասաց հայոց բանակի օրվա առթիվ, որ լրացավ հունվարի 28-ին (գրույցն ավելի վաղ էր կայացել՝ հունվարի 23-ին): «Մեր բանակը 23 տարեկան է, մի քիչ տարիքով ավելի, քան նրա շարքերում ծառայող զինվորները, ուստի նրան ցանկանում են հզորություն, ինչպես իր ստեղծման օրվանից՝ մարտունակ լինի: Մենք էլ մեր բանակի կողքին միշտ կանգնած լինենք: Շնորհավորում են հայոց զինված ուժերի սպաներին, զինվորներին՝ մինչև գերագույն գլխավոր հրամանատար: Թող խրամատներում մեր ժողովրդի անդորրը պահպանող զինվորի մազը չծռվի, նրա մտղը փուշ անգամ չմտնի, մեր տղաները միշտ լինեն խաղաղ օրերի զինվորներ»:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# Տղաներին բանակ են ճանապարհում նաեւ Կապանում



Հունվարի 22-ին Կապանի զինկոմիսարիատի բակից մտերիմներն ու հարազատները բանակ էին ճանապարհում ձմեռային զորակոչի հերթական հավաքի մասնակիցներին:

Հայաստանում մեկնարկած ձմեռային զորակոչին 18 տարին լրացած տղաներին բանակ են ճանապարհում նաեւ Կապանում: Հունվարի 10-ին մարզկենտրոնում տեղի ունեցավ առաջին հավաքը. ավանդաբար նորակոչվողներին ողջունում ու բարի ծառայություն են մաղթում Կապանի զինկոմ Լեոնիդ Գրիգորյանը, համայնքային իշխանության ներկայացուցիչները, Հայրենական եւ Արցախյան պատերազմի

մի վետերանները: Հունվարի 22-ին Կապանի զինկոմիսարիատի բակից մտերիմներն ու հարազատները բանակ էին ճանապարհում ձմեռային զորակոչի հերթական հավաքի մասնակիցներին: Հնչող հայրենասիրական ու մարտական ոգի ներշնչող երգերը ուրախ տրամադրություն էին խառնում բաժանվելու մտքից տխրած ու զավակների անվտանգությամբ անհանգստացած ծնողների



Կապանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, Կապանի վեդերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը:

տրտմությանը: Իսկ նորակոչվողները, իրենց ոգին ու բարձր տրամադրությամբ ծառայության մեկնելը ցույց տվեցին բակում բռնած շուրջապարով: Նրանց ողջերթի խոսքեր հղեցին, անվտանգ ծառայություն մաղթեցին ու խորհուրդներ տվեցին Կապանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, Կապանի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

# ՄԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «Մենք մեզ վերապահում ենք կանխարգելիչ հարվածներ հասցնելու իրավունք»

## Նոր իրավիճակ ՍԿԻՉԲԸ ԷՑ 1

ու մեր զինվորների կյանքերի գնով: Դա չի կարող արվել մեր հաշվին: Մենք մնում ենք այն համոզման, որ ճիշտը պայմանավորվել է, որ ճիշտը բանակցությունները շարունակվել է, եւ հայտնի սկզբունքների ներքո պայմանավորվածություններ ձեռք բերելն է, իսկ դա հնարավոր է միայն զինադադարի պահպանման եւ վստահության կամուրջներ կառուցելու պարագայում: Կամուրջներ այրելով ոչ ոք լավ բանի չի հասել եւ

չի հասնելու: Ես մեկ անգամ ես ի լուր բոլորի հայտարարում եմ. մենք պատրաստ ենք եւ լավին, եւ վատին: Իմ սեղանին առկա են հնարավոր բոլոր տարբերակները: Սթափ գործընկերոջ հետ կարող ենք եւ պարտավոր ենք խաղաղություն բանակցել: Ոչ սթափ հակառակորդին պարտավոր ենք եւ, անպայման, խաղաղություն ենք պարտադրելու», – ասել է նախագահը:

news.am  
26 հունվարի 2015թ.

## Հավապարիմ զինվորը

Մովսես Հարությունյանը հասակ է առել մանկավարժի ընտանիքում: Ծնողները դասավանդում են Կապանի տարածաշրջանի Արծվանիկ գյուղի միջնակարգ դպրոցում: Հայրը կրթօջայի զինղեկն է, մայրը՝ դասվար: Գյուղի դպրոցում ութամյա կրթություն ստանալուց հետո Մովսեսը սովորել է Կապանի N3 միջնակարգ դպրոցում եւ ընդունվել Երեւանի պետական Ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղը: Առաջին կուրսից զորակոչվել է հայոց բանակ եւ մեկ տարի է՝ կրում է զինվորական համազգեստ: Բարեխիղճ ծառայության համար երեք անգամ ծնողները եւ տատիկ-պապիկները հրամակագմից շնորհակալական նամակ են ստացել: Վերջին նամակից տեղեկանում ենք,

որ կրտսեր սերժանտ Մովսես Հարությունյանը, ծառայելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, պատվով է կատարում իր սրբազան պարտքը, զինվորական երդման պահանջներն ու ծնողական պատգամը՝ ազնվորեն եւ անմնացորդ նվիրվել մեր հայրենիքի պաշտպանության գործին: Մովսեսը ծառայության ընթացքում աչքի է ընկնում ազնվությամբ, բացառիկ բարեխիղճությամբ, կարգապահությամբ եւ կամքի ուժով, բարձր պատվով հայ ռազմիկի պատիվը, միշտ պատրաստ հայրենիքի սահմանների պաշտպանությանը: Մովսեսի եղբայրը՝ Դավիթը, ով ուսանում է Երեւանի պետական լսարանի միջազգային հարաբերությունների բաժնում, հունվարյան քննաշրջանի քննությունները հանձնելուց հետո եւս համալրել է հայրենիքի պաշտպանների շարքերը: Ձինվորներին ցանկանանք բարի ծառայություն:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# Արծվանիկը համայնքային յուրօրինակ կենտրոն կունենա

## Վյուղադահողություն

**Կապանի Արծվանիկ գյուղում դեռևս 1931 թվականին կառուցված դարոցի հին շենքում այսօր մեծ թափով շինարարական աշխատանքներ են ընթանում: Դրանց ավարտից հետո համայնքը կունենա երիտասարդների ժամանցի վայր, մանկապարտեզի ավելի ընդարձակ տարածք ու բուժկենտրոնի համար նորոգված նոր սենյակներ:**



Այդ ամենն իրականացնող «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունն է, ինչի համար արդեն ութ տարի համայնքը ղեկավարող Անուշավան Հարությունյանը շնորհակալություն է հայտնում ընկերության տնօրենությանը:

«Քանի որ Արծվանիկում է գտնվում «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության պաշտոնառն, եւ կոմբինատի գործունեությունն ուղղակիորեն կապվում է մեր գյուղի հետ, ձեռնարկության ղեկավար կազմի փոփոխությունից հետո համոզվում խնդրեցի: Լսել են իմ պահանջներն ու խնդրանքները, ներկայացրել են, թե ինչի կարիք ունի համայնքը», – պատմում է գյուղապետը: Նրա համար նախ առաջնային է եղել գյուղում երիտասարդների համար մի հավաքատեղի-ժամանցի վայր ունենալը: Եվ իրեն լսելուց անմիջապես հետո կոմբինատի շինարարական բրիգադն աշխատանքներ է սկսել գյուղում:

Շենքի մի փոքրիկ հատվածում տեղավորված է նաև գյուղապետի ու համայնքին օգնող անհատ բարերարի միջոցներով բացված մանկապարտեզը, որտեղ արծվանիկից

12 երեխա է հաճախում: Բայց վերանորոգված, կահավորված տարածքը շատ փոքր է, եւ գյուղապետի հաջորդ խնդրանքը եղել է տվյալ տարածքի ընդլայնումը: Այդ նախաձեռնությունը եւս կյանքի է կոչվել. մանկապարտեզը նոր խաղասենյակ կունենա, կվերանորոգվի նաև ՆՈՒՀ-ի մուտքը, եւ, որ ամենակարեւորն ու հրատապն էր, սանհանգույցը:

Բացի այս ամենից, արծվանիկցիներին մտահոգում էր բուժկենտրոնի վիճակը. դրա համար հատկապես սենյակները գտնվում են գյուղի մշակույթի տան մի մասում, որը վթարային է. գյուղապետի հավաստմամբ՝ գյուղացիները վախով են այդտեղ մտնում: Իրենք «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին դիմել են նաև բուժկենտրոնի նոր տարածքը կարգի բերելու խնդրանքով, եւ վերոնշյալ նորոգվող շենքում սենյակներ են բարեկարգվում բուժ-

կետն այստեղ տեղափոխելու համար:

Անուշավան Հարությունյանը նշում է, թե քանի որ գործ ունեն հին շենքի հետ, շինարարության ընթացքում աշխատողները բախվում են նոր խնդիրների, աշխատանքի ծավալն անընդհատ աճում է, բայց նրանք կատարում են ամեն անհրաժեշտը համայնքին բարեկարգ տարածք մվիրելու համար: Այս ամենի համար համայնքապետը նաև իր համագյուղացիների գոհունակությունն է փոխանցում կոմբինատի ղեկավարությանը՝ հույս հայտնելով, որ համագործակցությունն ու ներդրումները համայնքում կշարունակվեն:

Ըստ էության, համայնքային կյանքի այս կարեւոր կառույցները միավորող շենքը յուրօրինակ կենտրոն կդառնա Արծվանիկի համար: **ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ**

# Հանրային քննարկում «Օրիոս» կենտրոնում



Հունվարի 27-ին Կապանի «Օրիոս» կենտրոնում «Բլեքսթերգ Էներջի Արմենիա» ՍՊԸ-ն հասարակական կազմակերպությունների, ազդակիր գյուղական համայնքների ղեկավարների, պետական մարմինների ներկայացուցիչների հետ անցկացրեց հանրային քննարկում ներկայացնելու Սյունիքում նավթի եւ գազի պաշարների հետախուզական աշխատանքներ նախատեսող իրենց նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության խնդիրները:

Նախագիծը ներկայացրին եւ մասնակիցների հարցերին պատասխանեցին ընկերության ներկայացուցիչ Քրիստինե Վարդանյանը, երկրաֆիզիկ Գեորգի Ասլանյանը, ՀՀ բնապահպանության նախարարության փորձագետ Ջարուհի Ջուռնայանը: Տվյալ ՍՊԸ-ն Հայաստանում նավթ եւ գազ է որոնում Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ

Սյունիքի մարզերում: Մեր մարզում առաջիկա երկու տարում մի շարք գյուղական համայնքներում կիրականացվեն միայն երկրաբանահետախուզական ուսումնասիրություններ, կկազմվեն երկրաբանաֆիզիկական քարտեզներ. այս փուլում ընդամենը կուսումնասիրվեն տեղանքից հավաքված ապարները, հորատումներ չեն նախատեսվում:

Առաջին փուլի արդյունքների վերլուծությունից հետո միայն, եթե պաշարների հնարավոր առկայության նշաններ լինեն, ավելի խոր ուսումնասիրությունների, հորատումների կարիք կառաջանա:

Քանի որ ներկայիս հետազոտությունները շրջակա միջավայրի վրա որեւէ ազդեցություն չեն նախատեսում, ներկայից որոշեցին կողմ արտահայտվել նախագծին: **ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ**

# Ամփոփվեց 2014 թվականը

ՍԿԻՉԸԸ ԷՏ 1

պարզվեց, որ իրենք հիդրոտեխնոլոգիայի և կառուցողական կանխատեսումներից եւ վերլուծություններից զատ նաև ազդեցություններ են անում, օրինակ՝ ստուգում սերմացուի կենսունակությունը, նիստին ներկա ՀՀ ՏԿԱԻՆ փոխնախարար Արտաշես Բախշյանը մարզպետարանի գյուղվարչության պետին հարցրեց՝ իրենք օգտվո՞ւմ են դրանցից: Պարզվեց, որ գյուղվարչությունն այդ կանխատեսումներից տեղյակ չէ, տվյալ ծառայությունից չի օգտվում, ինչից հետո կոչ հնչեց՝ առավել արդյունավետ համագործակցել մարզի գլխավոր հիդրոտեխնոլոգիայի հետ եւ կիրառել ծառայության կանխատեսումները:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ Սյունիքի մարզային ստորաբաժանման պետ Ռուբեն Մարտիրոսյանի զեկուցումից տեղեկացանք, որ 2014թ. մարզում կնքվել է տեխնիկական անվտանգության փորձաքննության 169 պայմանագիր:



Արթուր Հարությունյան, Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ

«Հատուկ լեռնափրկարար ծառայություն» ՓԲԸ Քաջարանի ջոկատի ղեկավար Դավիթ Պետրոսյանը նույնպես ներկայացրեց նախորդ տարվա աշխատանքները, որից պարզ դարձավ, որ 2014-ին նրանք փորձաքննության են ենթարկել 367 օբյեկտ:

ՀՀ ՏԿԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Նիկոլայ Գրիգորյանը, ով վարում էր նիստը, ամփոփելով լսածն ու գնահատական տալով զեկուցումներին եւ դրանցում նշված աշխատանքներին, ընդհանուր առմամբ դրական գնահատեց նշված կառույցների անցած տարվա աշխատանքը՝ չմոռանալով նշել նաև հաշվետվությունների թերությունները

մասին: «Նշում եք, որ արտակարգ դեպքերի, զոհերի եւ վիրավորների թիվն աճել է, բայց վերլուծություն չեք անում, թե ինչու, – ասաց նա: – Մասնավորապես ամենաշատ տեխնածին աղետներ գրանցող այս մարզում պիտի մարդկանց ավելի մատչելի տեղեկություններ տաք՝ խուճապային իրավիճակներից խուսափելու համար, պիտի բացատրեք, որ դեպքերին արձագանքումներն են շատացել...»:

Նա նաև նկատեց, որ բնապահպանական մեծ ազդեցություններ կրող մարզում զեկուցողները չանդրադարձան առկա բնապահպանական ռիսկերին, հորդորեց ոչ թե չոր թվեր ներկայացնել, այլ ավելի շատ «գնալ դեպի մարդը»: «Այսօր փրկա-



ՀՀ ՏԿԱԻՆ փ/ծ տնօրենի տեղակալ Նիկոլայ Գրիգորյանը, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ՀՀ ՏԿԱԻՆ փոխնախարար Արտաշես Բախշյանը

կար ծառայությունը մարդկանց օգնության է հասնում ոչ միայն շատ բարդ իրավիճակներում, այլև պարզ ու կենցաղային, երբ ընդամենը մեկ ընտանիքի համար դա կարող է արտակարգ իրավիճակ լինել...»:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը եւ Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեորգյանը պատվոգրեր, շնորհակալագրեր, հուշանվերներ հանձնեցին նշված ստորաբաժանումների մի շարք աշխատակիցների՝ շնորհակալություն հայտնելով այս կառույցներին՝ համայնքների հետ համագործակցության, համայնքային կյանքում առաջացած խնդիրներում օգնելու համար:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խա-

չատրյանը, ուշադրություն հրավիրելով հանգամանքին, որ Սյունիքում բավականին շատ են ամեն տարի կրկնվող աղետները՝ սելավներ, անտառային հրդեհներ, սողանքներ, նկատեց, որ վերջին տարիներին մարզի փրկարար ծառայությունների աշխատանքում զգալի է դրական տեղաշարժը, որակի բարելավումը, եւ բոլոր ծառայություններին շնորհակալություն հայտնեց:

Նիստն ամփոփեց ՀՀ ՏԿԱԻՆ նախարարի տեղակալ Արտաշես Բախշյանը, ով, ի դեպ, յուրաքանչյուր ելույթից հետո մանրամասն հարցուփորձ էր անում զեկուցողներին եւ մատնանշում հաշվետվությունների թերությունները:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

# Ժամերգությունն եւ գովաբանական աղոթք՝ ուղղված Սուրբ Հովհան Որոտնեցուն՝ ծննդյան 700-ամյակի կապակցությամբ



## Ի՛նչ պատիժ է նշանակվել Գորիսի Նախկին քաղաքապետին

**Գորիսի Նախկին քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի դեմ հարուցված գործով դատաքննությունն ավարտվել է: Այս մասին NEWS.am-ը տեղեկացավ Դատական տեղեկատվական համակարգից:**

Դատարանը որոշել է Նելսոն Ոսկանյանին մեղավոր ճանաչել ԶԹ-ի 308-րդ հոդվածի 1-ին մասով (երկրորդ դրվագով) եւ նշանակել պատիժ 300 հազար դրամ տուգանք, ինչպես նաեւ մեղավոր ճանաչել ԶԹ-ի 310 հոդվածով՝ նշանակելով պատիժ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից 4 տարի ժամկետով գրկելը: Նելսոն Ոսկանյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չի եռանալու մասին խափանման միջոցը թողնել անփոփոխ միջին դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Դատարանը նրա նկատմամբ կիրառել է համաներում եւ ազատել պատիժը կրելուց:

Այսպիսով, հանցանքների համակցությամբ՝ ԶԹ-ի 308-ի 1-ին մասով (երկրորդ դրվագով) եւ ԶԹ-ի 310-րդ հոդվածով նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով՝ որոշվել է վերջնական պատիժ նշանակել որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից գրկելը 4 տարի ժամկետով եւ տուգանք՝ 33-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300.000 ՀՀ դրամի չափով:

Հիշեցնենք, որ ըստ մեղադրական եզրակացության՝ Նելսոն Ոսկանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ, օգտագործելով պաշտոնից բխող հեղինակությունը եւ անհատույց հողատարածք ձեռք բերելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, իր պաշտոնական դիրքը օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինքն իրեն մվիրատվության պայմանագրով անհատույց օտարել է 900 քմ հողամասը՝ համայնքի օրինական շահերին պատճառելով նվազում 729.000 ՀՀ դրամ վնաս: Նախկին քաղաքապետի դեմ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն քաղաքից չբացակայելու մասին, չի փոխվել: Գործի դատավարությունն անցկացվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Նապոլեոն Օհանյանի նախագահությամբ:

### ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

Միջնադարի եռամեծար փիլիսոփա, ուսուցչապետ, գիտնական ու եկեղեցական-քաղաքական գործիչ Հովհան (Հովհաննես) Որոտնեցին ծնվել է 1315թ. հունվարի 29-ին (ըստ գիտության մեջ իշխող կարծիքի) Որոտնավանքին մերձ Վաղատին գյուղում, իսկ սկզբնական կրթությունը ստացել Որոտնավանքում: Հետագա գործունեության մի մասը եւս կապված է Որոտնավանքի հետ, որը պատմական գրականության մեջ հիշատակվում է մեկ այլ անվամբ եւս՝ Վաղատնի վանք:

Մակար վարդապետ Հակոբյանի իր խոսքում համառոտակի ներկայացրեց նաեւ Սուրբ Հովհան Որոտնեցու կյանքի եւ գործունեության ուշագրավ դրվագները: Մասնավորապես՝ Հովհան Որոտնեցին կրթությունը կատարելագործել է Գլաձորի համալսարանում՝ Եսայի Նչեցու եւ Տիրատուր Կիլիկեցու ղեկավարությամբ:

Գլաձորի համալսարանի փակումից հետո (1338թ.) նա մեծ ջանքեր գործադրեց, որ հիմնվի Տաթևի տիեզերահռչակ համալսարանը, իսկ Տաթևում, դեռևս 9-րդ դարից, մեծ համբավ ուներ տեղի վարդապետարանը. համալսարանի ստեղծման գաղափարն իրականություն դարձավ 1373թ.:

Որոտնեցու մեկնությունները Սուրբ գրքի, Ավետարանների, Սաղմոսների վերաբերյալ եւ Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու, Պորփյուրի աշխատությունների մասին մտել են հայ փիլիսոփայական մտքի պատմության ոսկե գրքի մեջ:

Հովհան Որոտնեցին մեր պատմության մեջ մնացել է որպես ունիթորների՝ Հռոմի պապի միսիոներների եւ նրանց հայ հետետորդների դեմ պայքարի դրոշակակիր:

Մեարոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող բազմաթիվ ձեռագրերը վկայում են, որ Որոտնեցին հսկայական տաղանդի եւ հեղինակության տեր անձնավոր

ությունն էր: Ձեռագրերից մեկում նա համարվում է «*սուրբ եւ տիեզերահռչակ եւ երանաշնորհ թաթևապետ Հայաստանեաց*»: Մահվան առիթով մի սքանչելի ներբողեան է հյուսել նրա մեծահամբավ աշակերտը՝ Սուրբ Գրիգոր Տաթևացին՝ Որոտնեցու մահը համարելով «ցավազին աղետ», «անկշռելի տարակույս», «ծանրածանր տրտմություն»:

Հովհան Որոտնեցու ծագման վերաբերյալ գիտության մեջ շրջանառվում է երկու կարծիք՝ ա) սերուն է Սյունյաց Օրբելյանների նշանավոր տոհմից, բ) սերուն է (որ ավելի հավանական է) Սյունիքի բնիկ իշխանական տոհմից՝ Որոտնաշիրից, ովքեր Միսակի տոհմի շարունակությունն էին: Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց» գրքում հենց երկրորդ վարկածին է նախապատվություն տրվում, նշվում նաեւ հոր անունը՝ Իվանե:

Ժամերգությունից առաջ եւ հետո հավաքվածները գրուցում էին Որոտնավանքի հիմնադիրների մասին՝ հիշատակելով հատկապես սրբազան անունները, ովքեր առնչվում են Աստծո այդ տաճարի կառուցման հետ: Առաջինն այդ շարքում, իհարկե, Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է. ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ «*այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար Սուրբ Գրիգոր Լուսավորիչ անունով, որը, կարծես, նրա կողմից էլ հիմնադրված էր...*» (Սյունիքի պատմություն, էջ 257):

Այդ օրը հնարավոր չէր չիղել Սյունյաց երանելի թագուհի Շահանուխտին (Սյունիքի առաջին թագավոր Սմբատի տիկնոջը), ով 1000թ. «*աստվածային մի հիշեցումից մղված, շինում է Վաղատնի գեղեցկակերտ ու վայելչաձեւ վանքը, որը դեռ վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր*» (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 257): Խոսքը նախավկա Ստեփանոսի անվան եկեղեցու մասին է, որի գավիթում կամ աղոթատանն էլ թաղ-



ված է Սյունյաց թագուհի Շահանուխտը:

Հնարավոր չէր չիղել նաեւ Սմբատ թագավորի եւ Շահանուխտի որդի Սեւադային, ով էլ 1006թ. կառուցեց վանքի երրորդ եկեղեցին՝ Սուրբ Կարապետը:

Հունվարի 29-ին Որոտնավանքում տեղի ունեցած արարողությունը, ըստ էության, Սուրբ Հովհան Որոտնեցու ծննդյան 700-ամյակին նվիրված առաջին միջոցառումն էր: Տարվա ընթացքում,

ինչպես նշեցին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը եւ Միսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը, տեղի կունենան այլ միջոցառումներ եւս:

*Հ.Գ. Հայ առաքելական եկեղեցին Սուրբ Հովհան Որոտնեցու հիշատակը տոնում է Մեծ պահքի 20-րդ օրը (Մեծ պահքի Դ կիրակիի նախընթաց շաբաթ օրը):*

ՆՈՒՐԱՐ ԴՎԿԹՅԱՆ

# «Շարադրություն» կտիարեցներ Ռաֆիկ Արսենիչին

## ԼԵՆԱ ԴՈՎՍԵՓՅԱՆ

### Որպես նախաբան

Գործիսյան մառախլապատ մի օր մեր գրականության ուսուցիչ Ռաֆիկ Արսենիչին ասաց. «Երեխեք, այսօրվա շարադրության թեման է՝ «Աշխարհը՝ գրականության կաբինետի պատուհանից»։ Իսկ պատուհանից բառացիորեն ոչինչ չէր երեւում. թանձր մառախուղին լուսամուտի ապակին հազիվ էր դիմակայում:

Տղաներից մեկը բարձրաձայնեց. «Երեխեք մի տող ենք գրելու՝ «Մառախուղ էր, հեջ բան չէր երեւում»:

«Այ տղա, մառախուղն ի՞նչ կապ ունի, հոգու, հոգու աչքերով նայեք, էնքան բան կերեւա», - հայացքով չէրեւացող հեռուները գրկած՝ ասաց Ռաֆիկ Արսենիչին:

Ու երեւաց. ամենքս, մեր խելքն ու միտքը կտրածին չափով, մեր աշխարհները գնացինք...

Դա իմ կյանքի ամենախնամախոս գրականության դասն էր: Չետո, դասաժամեր շարունակ, վերընթերցում, քննարկում էինք: «Ապրեք, երեխեք ջան, հավատավոր՝ գրեք են՝ լո՛ւյս են տեսնում, լո՛ւյս», - կրկնում էր Ռաֆիկ Արսենիչին:

### Երեքը մեկ էլ չի դառնում, եր մեկն էլ...

Չիմա, մի ողջ հավերթություն՝ 40 տարի անց, կեսգիշերին, երբ ես ու քունս հերթական անգամ հաշտ չենք, նստած Գետախնայա թաղամասի չորրորդ հարկի մեր տան պատշգամբում, նայում են քուն մտած քաղաքին ու մտածում, թե Ռաֆիկ Արսենիչին հրաշքով գար ու ասեր՝ դե՛, Չովսեփյան Լենա, գրիր շարադրություն «Գործիս» մեր պատշգամբից» թեմայով, ի՞նչ կգրեի, ո՞նց կգրեի...

Չնայած լուսնկա, աստղառատ գիշեր է, չնայած մեր շենքի աջ ու ձախից հոսող Վարարակնի վտակների խշռոցը միտքս ու նյարդերս թել-թել մանում է, չնայած լուսնի մանգաղով ապարանջված Լաստի խութի ու Արմենի սափի ձիգ ուրվագծերը վստահություն են ներշնչում, չնայած «գիրը կորցրած» մի քանի ծտեր աջ ու ձախից իրար սերեմադներ են ներբողում, չնայած տանն ու դրսում... խաղաղություն է, երեւի թե՛ անռոմանտիկա բան կստացվի:

Կասեի՛ Ռաֆիկ Արսենիչ, բեր մեր քաղաքի, մեր երկրի մասին դատեմ հենց մենակ մեր, մեր մի՛ հատիկ բնակչենքի օրինակով: Շեղ կժպտար ու կասեր՝ է՛հ, այ՛ քարահունչեցի, համոզեցիր:

Եղպես կասեի, որովհետեւ Աստ-ժո անեն օր, գլուխս բարձին դրած, ես, երեւի հազարերորդ անգամ, շենքի տակից տալիս, վերելով դուրս եմ գալիս: Անգիր՝ ջրի պես գիտեմ ահել-ջահելների թիվը, ծնված-հեռացածների թիվը, հարս գնացածների ու հարս եկածների թիվը...

Ու, այսօրվա հետ համեմատությունից, թվերն անգամ կուչ են գալիս. երեքը մեկ էլ չի դառնում, եր մեկն էլ տագնապներից ու պակասից խեղճ է:

### Մեր շենքը մի տեսակ... կա-նացի է դարձել

Բնակարանատերերի մեծ մասը միայնակ ծերունիներ են, որ հիմնականում գիշերն էլ լույս չեն վառում. հեռուստացույցի ցլոքե՛րն են հե-



րիքում, թե՛ բան տեսնելու ցանկությունն էլ է մարել:

Բնակիչների միջին տարիքը կենսակերպին հակադրած համեմատական է: Շենքում 29 բնակարան է ու... իրենց հարկի տակ գիշերող մի չամուսնացած երիտասարդ չկա: Գնացել են: Գնացել են հատիկ-հատիկ, գնացել են իբր գնալ-գալու համար, բայց մնացել են, մնում են՝ չե՛ն ու գուն, չե՛ն կարողանում գալ...

Կիսաջահել-կիսաահելներն են գնում կամ գնացել, էնտեղ են ահելությունը դիմավորել՝ խիղճներից ցավ ու մեղք չալակ տալով: Շատերն էլ արդեն, պարզապես, էլ չեն գալիս՝ տարիներով: Մեկը տեղը-տեղին հաստատվել-մնացել է, մեկը հետդարձի երես չունի, մեկը օճորք կամ չորս պատ ունեցող մի ռուս մորթուրի կամ տատիկի փեշի տակ է գրանցվել-ծվարել-մնացել, մեկի տունն էնտեղ կամ էտեղ է շաղ եկել՝ համ ու հոտ կորցրել, մեկի մասին վաղուց ոչինչ հայտնի էլ չ...

Մեր շենքը մի տեսակ... կանացի է դարձել, է՛հ, լավ չասացի՛ թող ներեն տղամարդիկ, գեղեցիկ սլաքը խտորվել է: Տատիկները, որ ամառ-ձմեռ մեջքները տաք ու... պինդ պահող բրդյա ժիլետներով են, որ չենք... Մայրուհի են, որ բակի ելունուտը՝ ոտքով ու տաք-տով, դատարկ ու սետկաներով եկող-գնացողներին են բանավոր հաշվառում-կոնսպեկտում, ճիշտ է, ջահելներից շատ ավելի կայտառ են, բայց զիզգազած ունքերով են, վաղուց չենրկած մազերով են, գրույցը հիմնականում ծնկներին խփելով են անում, ու բարեւելիս էլ ժպիտը ծուռ-տիկ-մուռտիկ է ստացվում. հոգիներում խռովք է...

Չափել հարսներն էլ, որ հիմնականում գործ չունեն, որ տանն են, մազ ֆենելու առիթ ունենում են մոտակա խանութ գնալիս: Առետուրներն էլ հիմնականում ստանդարտ է՝ ամանների հեղուկ, լվացքի փոշի, ձեթ, սուրճ, վերմի-շել, աղ, շաքարավազ, զուգարանի թուղթ (շոռայություններից են՝ մի բանան ու մի «Барани» մանկական թխվածքաբլիթ): Դա, մեկ էլ մազները ֆենում են երեխեքին հենց բակի մանկապարտեզ տանելիս: Դա, տանն են, բայց տանում, տանում են, ու երեխեքն էլ տարին կլոր հիվանդ են: Ի՞նչ անեն, ե՛ւ տնից դուրս գալու առիթ է, ե՛ւ իրենք իրենց համար զբաղվածության պատրանք են ստեղծում: Մեկ էլ՝ գուցե մի գործ

ստացվի, ոտքները ազատ լինի...

Չատ ու կենտ տղամարդիկ էլ ոնց որ շեքսպիրյան ողբերգություններից մոռացված-մնացած լինեն. հենց էնպես բակ դուրս գալ չկա՛, մարդու հրավեր չկա՛, մի-մի բաժակ թթի օղիով մի բան ասել չկա՛, անգամ՝ կանանց հետեւից մի կարգին մայրը չկա՛...

### Չե՛ն գիդի ժամանակներ

Չե՛ն գիդի ժամանակներ. առաջին հարկի՛ փոստի առաջ դրված փայտե ծուռտիկ նստարանի մոտ, գործից հետո, շաքաթ-կիրակի օրերին հերթն «իրար ուտում էր»... Քաղսովետի երբեմնի ճախագահ ծյած Գուրգենի ու շենքի ամենակողորմատյան տղամարդու՝ Թանգուն Սեւադայի մարդու մրցամարտի հաշիվը հասնում էր, ասե՛նք, քառասունվեց-վեցի... Վերջում պարզվում էր, եւ համարյա ամեն անգամ, որ Սեւադան էլի 15-ի փոխարեն 13 քաղով էր խաղացել... էլի Գուրգեն պապին շարունակ էր գառերը, էլի՛ կիրք նեղանում... մուռ-տառությունից, էլի՛ հիմա ռուսաստաններ մեկնած Ռուբիկենց շենքի «հերանց տանն» էին բարիշուռ, տանտիրուհի Ավարդի բարեխամ-բույր հյուրասիրությունից ու Քարահունցի թթի... «կոմպոտից» հետո...

Չետո նորից թունդ էր առնում մարդին, ու էլի Սեւադան տակին ինչ-որ բան էր հաջողում թաքցնել...

Չիմա էլ նստարանին էլ, մանկապարտեզի պատերին էլ նստողները տատիկներն են՝ Նիմա տատի գլխա-վորությամբ: Ի՛ դեպ, նա մի քանի օրով մոսկվաներ գնաց՝ աղջիկը տարավ, շենքը, ասես, թռչնեց, կնամիքն էլ, ասած գործիցեցու՝ «պիլականները կորցրին»... Մերօրյա խոսքով՝ փիար մեներեքը չկա՛ր... Կարոտեցից, մե-նակ մնացիք, ինքն էլ չդիմացավ՝ ճղեց-եկավ, շենքը տեղն ընկավ...

### «Մեր կապը գյուղից կտրե-լը մեղքի պես է՛ էնպեղ գերեզմաններ ունենք, դառը քրտինքով դրած ապրուստ ունենք»

Բայց մեր շենքի ճեպանկարի վրա ինձ ամենից շատ տխրեցնում է Ելենա տատի խորն ու խորունկ աչքերում պինդ նստած տխրությունը: Մեկ-երկու տարի առաջ են նրանք մեր շենք եկել Սվարանց գյուղից, որ Գործից մի 30 կմ-ի վրա է ընդամենը... Գյուղ, որի երբեմնի 380 աշակերտ («ա»,

«բ» դասարաններ, գիշերային՝ անգամ) ունեցող դպրոցում հիմա... դեռ 17-ը կա, որի առաջին դասարանում, ոչ վաղ անցյալի 38-ի փոխարեն, հիմա մի երեխա կա՝ Չամլետ անունով մի տղա, իսկ այս տարի էլ... դեռ ծնունդ չի եղել... 800 բնակիչը 160 է դարձել, 123 տնից 60-ը կողպեքի հույսին է, միջին տարիքն էլ երկինք է թռել... «Տաթևի վերածնունդ» ծրագրում ներառված թիրախ-գյուղի համար, իր քթի տակ թելին տվող, աշխարհ ցնցած գինեայան ճոպանուղին էլ բան չկոխեց. զբոսշրջիկները «կոմֆորտ» են սիրում...

Է՛հ, Ելենա տատին դառնա՛մ. պահվածքից, նստել-վերկենալուց երեւում է, որ արած-դրած կին է, մեծ ու հաշտ գերդաստանի մայր: Եկել է, որովհետեւ, գյուղում... ջահելների համար տխուր էր, շա՛տ տխուր, որովհետեւ մանկապարտեզ չկար, գրուցընկեր չկար, ապագա չկար... Տեղը՝ փատություն ու նեղսրտու-կյուն կար, ձմեռը ծննդաբերող կնոջը տրակտորով, էն էլ հաջողու-թյան դեպքում, Գորիս հասցնելու գերխնդրը կար...

Ու, դրա կողքին, հեռուստացույց-ներից երեսոցող պսպղուն, անհոգ ու «անդարդ» կյանքեր կա՛ն, հաճույք-ներ կա՛ն, կյանք վայելել կա՛... Ու կյանքը մի անգամ է տրվում, ու բու-լորը չեն, որ օրը փառաբանությամբ ու գոհացումով են սկսում, որ բաղե-ղի պես փաթաթված են իրենց հող ու ջրին, իրենց կամ իրենց մանկան առաջին ճիշը գուրգուրանքով պա-հող օճորքին...

Ու, տեղի տալով ջահել հարսին ու տղային, երկու մանկահա-սակ երեխեքով, թողնելով երկհարկ առանձնատուն, տուն ու տեղ, հողա-մասեր, եկել են... քաղաք՝ Գորիս: Եկել են ու հավաքվել երրորդ հարկի մի փոքրիկ ու անշուք վարձով տան մեջ: Ես Գորիսում էլ էլի գործ չկա, ու որդին էլի մեկնել է Ռուսաստան. տան վարձ, կոմունալ ծախսեր, ի վերջո՝ օրվա հաց: Նաե՛ւ՝ քաղաքի թելադրած ծախսեր...

Կարծես տեղին է ասել՝ էլ գալու խերը ո՞րն էր: Խեր, երեւի թե, էլի կա. գոնե հարեւաններ կան, օրը մեկ-երկու անգամ «կոֆե-բրեյք» կա, գյուղի համեմատ՝ ելունուտ կա, շարժ կա՝ քաղաքակրթությունը Գորիսին, գյուղի չափ, մտահան արած չի... Թռռռուկին պարի է գնում, թո-ղը՝ մանկապարտեզ, մանկավարժի բարձրագույն կրթությամբ հարսն էլ, որ է... տխուր գյուղում գոնե աշխա-տանք ունե՛ր՝ ուսուցչուհի էր (քաղա-քում դպրոց մտնելը հո խաղ ու պար չի), փորձում է նոր տողից մի փեշակ ձեռք բերել, ասե՛նք, գոնե վարսավի-րություն կամ մի այլ բան. վաստակել է պետք, թե չէ՛ մինչեւ երբ պիտի հայ-րական տնից օգնության հասնեն...

«Մեր կապը գյուղից կտրելը մեղքի պես է՛ էնտեղ գերեզմաններ ունենք, դառը քրտինքով դրած ապրուստ ունենք», - սա էլ Ելենա տատի, մեկ է՛ դեռ Սվարանցում մնա-ցած մեղքի ընդվզումն էր: Ու մեծախո-սության պես էր, ու ինքնամիսթարու-թյունից են կողմ չէր...

### Ելենաների հոգու վերքե-րը, կուլ տված հոգոցները հաշիվ չեն, վերեներում «լսելի» չեն...

Ելենա տատի աչքերի խորքում ասած-պաղած արցունք կա. իրեն պահելով է անում, որ ջահելները չնեղվեն, ավելի ճիշտ՝ չճնշի, որ հա-

րեւանների մոտ չխեղճանա. ցույց է տալիս, թե գոհանում է տարին մեկ-երկու ամիս գյուղ գնալով, ամուսնու հետ, սելով կրած քար ու ավազով իր սարքած տնից կարոտն առնելով, ցույց է տալիս, թե հավատում է... պայծառ ապագային... «Խնձորները քաղել-տարել էին, ջիանդամը, գոնե ծառերս ճյուղակտոր չանեին: Առաջ սենց բան չէին անի. մարդիկ էլ են փոխվել», - սա վերջին անգամ գյու-ղից իր հետ Գորիսի վարձով տուն բե-րած ցավն էր:

Ելենա տատն իմ տեսած ամե-նա՝ դարդը ներս քաշած, էսօրվա խոսքով՝ միգրանտն է: Իր ասած՝ ո՛չ գյուղացի է, ոչ՝ քաղաքացի: Գյուղի տունը կողպվում է, իր ասած՝ «մեծ գյուղ» Գորիսում էլ տուն ունենալու հույսի ծերն անգամ չի երեւում:

Բայց Ելենան ու Ելենա տատե-րը են վերեներում չեն թվագրվում. կասե՛ն՝ մեր Ելենան ի՛ր երկրում է, իր ազատ ու անկախ Չայաստանում է, որդին է... ժամանակավորապես դրսում... Ելենաների հոգու վերքերը, կուլ տված հոգոցները հաշիվ չեն, վերեներում «լսելի չեն»...

### «Ա՛յ խալիս, վիզն առնենք՝ մենք մի քիչ էլ պորպուներս դրսում կտրած ժողովուրդ ենք»...

Գիշերն աննկատ ասեղ-լուծվել է այգաբացի մեջ: Լաստի խութն արելի դեռ պաղ ցոլք է ուսել: Ես մտքերիս հետ եմ: Իմ մտքերն էլ պաղ են:

«Շարադրություն» կտիարեց-ներից երջանակալիշատակմեր դպրո-ցի տնօրեն, իմ շա՛տ սիրելի ընկեր Պետրոսյանին՝ Ռաֆիկ Արսենիչին. նա հավատավոր գիր էր սիրում: Գրի՛ մեջ՝ լո՛ւյսն էր սիրում: Ես էլ:

Բայց մեր շենքում, է՛հ, մեր երկ-րում էլ լույսը դեռ քարկապ եղած է, դեռ մի կտոր հացը ռուսաստանների երկրից կախ է, դեռ ջահել հարսները, ի հեռուկա չգիտե՛ն՝ ում քաղաքացի լինել են ուզում...

Բայց ասե՛մ նաեւ, որ էստեղ հիշե-ցի մեր դրկից, գործակատար Վար-դուշ տատի, դեռ Սովետ Միության ժամանակ, հաճախ կրկնած միտքը. «Այ խալիսվիզն առնենք՝ մենք մի քիչ էլ պորպուներս դրսում կտրած ժողո-վուրդ ենք»...

### Չ.Գ. Խի՞՞ հիշեցի:

Որովհետեւ դրսերում երկնքից խնձորներ չեն թափվում, որովհետեւ դրսերի վախերի ու տագնապների վրա պարպած էներգիան մեր հողն ու ջուրը խոնարհումով կրումբան-գեն, որովհետեւ մեր հավերժական դժգոհությունները, ցավը, միշտ չեն արդարացի, փաստարկված ու հասցեական, որովհետեւ հայ տղա-մարդիկ իրենց անձնագրերում ասես ռուսական՝ «հասունության» մի կնիք պիտի անպայման ունենան, որովհե-տեւ հայ հարսները, տան դուռը կող-պելուց առաջ կամ հետո, չեն սիրում գոնե մի անգամ քերթել իրենց մայ-րերի ու կեսուրների ապրած կյանքի անգրել ԶեռնԱրԿեՆԵՐԸ կամ ուղիղ նայել նրանց աչքերին...

Որովհետեւ գյուղերի կողպված տների մութ անկյուններում կուչ եկած, հոգեվարքող ՈՂՈՒ նեղա-ցածություն կա, որովհետեւ դրսում արժանապատվությունը ... մանրա-դրամի պես է...

Որովհետեւ իշխանավորը, իրոք, հայոց գյուղերի ճակատագրերի նկատմամբ... խուլ ու մուռն է, բայց մեր ծուլությունն էլ երկրի շլճից փաթաթելը դժվարություններից փախչելու ամենադուրսին արդարա-ցումն է. մեղք է...

Որովհետեւ, իմ կարծիքով (չնա-յած խառաքարո լրագրությունը «Ես»-ը տողի գլխին այնքան էլ չի սի-րում) ամենալավ բանը քո հողի վրա կառուցված քո տան դուռը քո բանա-լիով բացելն է...



# Քաղաքացին, գինվորը, հրամանատարը

## Ակնարկ

Աշոտ Մինասյանը համարում ունեցող անձնավորություն է Սիսիան քաղաքում և Սիսիանի փարածաշրջանում: Այդ անուն-ազգանունը, Նախեռառջ, զուգորդվում է և Արցախյան շարժման և մերօրյա ազատամարտի հետ, որոնց մասնակցել է սկզբնավորման փուլից: Սիսիանում հաջողակ ձեռնարկի համբավ ունի, հիմնադրել է «Կանթեղ» հանգստյան գոպին՝ այդպիսով սպեղծելով երկու փաստյակ աշխատատեղ: Մոտ հինգ տարի, երբ պաշտոն ու աշխատանք չի ունեցել, զբաղվել է գյուղատնտեսությամբ: Առօրյա կյանքում խորագիրակ ու հաճելի զրուցակից է: Իններորդ տարին է, ինչ ղեկավարում է Սյունիքի փարածաշրջանային մաքսատանը: Սիսիանի համայնքի ավագանու որոշմամբ նրան շնորհվել է Սիսիանի պարավար քաղաքացու կոչում: Իր հավաստմամբ՝ հեռու չի մտում Սիսիանի և հանրապետության հասարակական կյանքից, երազում է բնակավայրը, որտեղ ապրում է, տեսնել բարեկարգ ու ակնահաճ:

## Կյանքի ուղին

Ծնվել է Սիսիանի շրջանի Լծեն գյուղում 1960 թվականին ուսուցչի ընտանիքում: Սովորել է ծննդավայրի ութամյա դպրոցում, հետո տեղափոխվել Սիսիան, ավարտել N2 միջնակարգ դպրոցը, մեկնել խորհրդային բանակ: Ձորացրվելուց հետո աշխատանքի է ընդունվել Արփա-Սեւան շինվարչությունում, հեռակա կարգով ընդունվել է Լեւոնիգրադի կուլտուրայի ինստիտուտ, աշխատանքին զուգահեռ ուսանել բուհում: Այնուհետև աշխատանքի է անցել Սիսիանի մշակույթի տանը՝ մասնագիտությամբ: Ընտանիքի հոգսը թեթևացնելու նպատակով երկու տեղ է աշխատել: Երեխաներից



Սիսիան, «Կանթեղ» հանգստյան գոպին

ավագն է, տանը չորս երեխա է եղել, երկու եղբայր, երկու քույր: Դարաբաղյան շարժման անդամագրվել է սկզբնավորման շրջանից, հետո գործում մասնակցություն ունեցել Արցախյան պատերազմին: Տարածաշրջանում հրադարպ հաստատվելուց հետո նշանակվել է Սյունիքի տարածաշրջանային մաքսատան պետ, մի քանի տարի աշխատելուց հետո դուրս է եկել, աշխատել կազմակերպության տնօրեն, այնուհետև հանրապետության տրանսպորտի նախարարության կից երկաթգծի «Երեւան» կայարանի պետ, ապա այդտեղից էլ է դուրս եկել, որը ժամանակ չի աշխատել, զբաղվել է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, ինչով կարողացել է, 2003-ին մրցույթով անցել է և նշանակվել Երևանի տարածաշրջանային մաքսատան պետ, որից հետո՝ 2006 թվականին, Սյունիքի տարածաշրջանային մաքսատան պետ, որտեղ աշխատում է առայսօր: Իր ղեկավարած կառույցը սպասարկում է Վայոց ձորի, Սյունիքի մարզի և Լեւոնային Դարաբաղի Յանրապետության այն կազմակերպություններին,

որոնք արտերկրի հետ գործառնքներ են իրականացնում: Բոլոր մաքսային ձեռնարկումները կատարվում են Սյունիքի տարածաշրջանային մաքսատանը, որը Սեդրու մաքսակետի հետ ունի մոտ 100 աշխատող: Աշոտ Մինասյանը տեղեկացնում է, որ մաքսատան նոր շենք պիտի կառուցվի, ինչը ենթադրում է նաև աշխատատեղերի ավելացում: Մասնակցությունն Արցախյան պատերազմին Աշոտ Մինասյանի կենսագրության մեջ մի շատ կարևոր հատված է: Դարաբաղյան շարժմանը և Արցախյան գոյամարտին մասնակցությունն է: Մեր զրուցակցին խնդրեցինք մի քիչ հանգամանորեն ներկայացնել այդ ժամանակահատվածը, մասնակցությունն Արցախյան գոյամարտին, որովհետև մեծ ավանդ ունի որպես գինվոր, որպես հրամանատար: – Շարժումը սկսվելուց հետո բոլոր տարածաշրջաններում ստեղծվեցին «Դարաբաղ» կոմիտեներ, կարելի է ասել, երբ շարժումը թափ

առավ, Սիսիանում էլ ձեւավորվեց դրա տեղական կառույցը, որ ստեղծեցինք մի քանի ընկերներով: Ներգրավվեցի տեղի «Դարաբաղ» կոմիտեում, և աշխատանքները սկսեցինք տանել կենտրոնից ստացվող հրամաններով ու կարգադրություններով: Յուրաքանչյուրս ինչ-որ ոլորտի պատասխանատու էր: Դեկավարը Մասիս Բաղդասարյանն էր, ով այդ ժամանակաշրջանում դասավանդում էր Գորիսի ինստիտուտում: Ինձ նշանակեցին Սիսիանի պատասխանատուն՝ ռազմական գծով: Կամազ-կամազ սկսեց ձեւավորվել պաշտպանական շրջանը: Արքեպեպոստոսի լիտուրգիան այն աստիճանի էր հասել, որ թափանցում էին մեր տարածքները, սահմանամերձ գյուղերի ֆերմաներից անասուններ գողանում: Դրսից զենք էի հայթայթում և ներկրում Յայաստան: Քանի որ զենք հայթայթելու նպատակով բացակայում էի հանրապետությունից, Սիսիանի «Դարաբաղ» կոմիտեի խորհուրդը որոշում կայացրեց հրամանատար նշանակել լավագույն ջոկատի՝ Վաղատինի ջոկատի հրամանատար Գոմիկ Ազոյանին, ինքս կատարում էի շտաբի պետի պարտականությունները: Սկզբնական շրջանում դյուրին չէր, եթե չասենք չափազանց դժվար: Նախ՝ զինվորական չես և կատարում ես մի աշխատանք, որ կապված է ռազմական գործի հետ: Ինչ-որ առումով մեր բախտը բերեց, որ միանգամից չպայթեց պատերազմը, մենք էլ աստիճանաբար սկսեցինք հմտանալ զինվորական գործի մեջ, տիրապետել զենքին և ռազմական տեխնիկային: Մերօրյա ազատամարտը սկսեցինք պատերից կախված որսորդական հրացաններով, նվիրյալ, բայց ռազմական փորձ չունեցող կամ գրեթե չունեցող տղաներից կազմված ջոկատներով: Միայն հատուկներ մարզիկ ունեին ակոսավոր զենքեր, «Մոսին», «Կարաբին» տեսակի հրացաններ: Սահմաններում իրավիճակն ավելի սրվեց, երբ հարեւան հանրապետությունից տեղահանվեց հայ բնակչությունը: Փաստորեն, Յայաստանին պատերազմ պարտադրվեց, Աշոտ Մինասյանը «Սիսական» ջոկատով մասնակցել է Վայքի, Եղեգնաձորի, Երասխավանի, Գորիսի, Կապանի, Արցախի մի շարք բնակավայրերի պաշտպանական մարտերին, իր ձեւակերպմամբ՝ որտեղից իրենց օգնության են կանչել: Արցախյան պատերազմում ճաշակել է հաղթանակի բերկրանքը և մարտական ընկերների կորստի պատճառով դառնությունը: Մարտական օրերի ամենաուրախ պահերից մեկը Յայաստան Արցախի հետ կապող Լաչինի միջանցքի բացումն էր: Բայց նույն այդ միջանցքի պաշտպանության համար Սուարաս և Սաֆյան գյուղերի մատույցներում «Սիսական» երկրապահ ջոկատի յոթ մարտիկ հատուցեց կյանքի գնով: Յրանաճատարի համար ինչ-շարժան է 1992թ. դեկտեմբերի 10-ը, երբ «Սիսական» ջոկատի մարտիկների ջանքերով գրավեցին հակառակորդի կողմից ռազմական հենակետի վերածված Կապան քաղաքի մոտակա բարձունքները և ուղիղ նշանառության կրակից ազատեցին շրջանի 11 գյուղ: Գրոհի ժամանակ ձեռնամարտի է բռնվել հակառակորդի հետ: Անթաքույց հպարտությամբ է պատմում «Նիկոլ Դուման» ջոկատի գոհված մարտիկների դիակների՝ թշնամու կողմից գնդակոծվող ծորակից դուրս բերելու օպերացիայի մասին, որ բացառապես իրականացրին «Սիսական» ջոկատի տղաները: Տպավորվել է նաև այն միջադեպը, երբ հակառակորդից ազդարարված երկու «Գրոհ» կայանքը «նվիրեց» դարաբաղցի ժողային: Օգնության հասավ նաև Գորադիզում կռվող

մարտիկներին, հիշում է հատկապես 1994-ի հունվարի 26-ի մարտը, որն ամենահաղթանակներից էր իր տեսածներից... «Չկրակված փամփուշուներ» Աշոտ Մինասյանը Արցախյան պատերազմի հետ կապված անամոք վիշտ ունի: Մերօրյա գոյամարտում կորցրեց միակ եղբորը՝ Աղվանին, ով քսաներեք գարուն էր բոլորել ընդամենը: 1988-ին գորակոչվել է խորհրդային բանակ, երբ ազգային-ազատագրական շարժման թափանիվն ավելացնում էր պտույտները: Ուստի կիսատ թողեց ծառայությունը՝ համարելով, որ իր տեղը հայրենիքում է: Ընդգրկվեց Սիսիանի երկրապահ ջոկատում, որի կազմում մասնակցել է Մարտակերտի, Ֆիզուլիի, Լաչինի, Քարվաճառի, Կապանի, Գորիսի, Արցախի բնակավայրերի համար մղված մարտերին: Թշնամու գնդակը նրան գտավ 1993-ի օգոստոսի 30-ին Լաչինի շրջանի Մուրադխանլու գյուղի ազատագրման ժամանակ: Ուշագրավ է, որ չարագուշակ մարտից առաջ՝ գիշերը, գոհվելուց առաջ ծայնագրիչին է հանձնել բանաստեղծությունները: «Դու գնում էիր երկիրը՝ այնտեղ գտնելու քո դատարկված տեղը»: Յայաստանի գրողների միության վարչության նախագահությունն Աղվան Մինասյանին հետմահու ընդունել է գրողների միության անդամ և «Տապանագիր» (1994թ.) ու «Սեր և խաչ» (1997թ.) ժողովածուների համար արժանացրել գրական հատուկ մրցանակի: «Չկրակված փամփուշուներ»: Այսպես է կոչվում Արցախյան պատերազմի մասնակից, ռեժիսոր Սամվել Թադևոսյանի ֆիլմը նահատակ պոետ-մարտիկի մասին, որի հիմքում ընկած են մարտական գործողությունների ժամանակ նկարահանված փաստագրական նյութը, ինչպես նաև եղբոր՝ Աշոտ Մինասյանի՝ Աղվանին հասցեագրված «Չուղարկված նամակները»: Ֆիլմի դերակատարները նույն իրենք ազատամարտիկներն են, ովքեր իրենց դերը մարմնավորում-կերպավորում են 13-14 տարի անց, այդ թվում և Աշոտ Մինասյանը: 2006-ին՝ Կապանում ֆիլմի շնորհանդեսի ժամանակ, Աշոտ Մինասյանն ասաց. «Ֆիլմը, ճիշտ է, իմ եղբորն է նվիրված, բայց խնդրում եմ Աղվան Մինասյանի կերպարի մեջ տեսնել յուրաքանչյուր զոհված ազատամարտիկի, որպես ձեր եղբոր, որպես յուրայինի, քանզի բոլոր զոհվածներին ես իմ եղբայրն եմ համարում: Խոսելով կինոնկարի մասին Աշոտ Մինասյանը նշում է, որ այն մարտաֆիլմ չէ, այլ երիտասարդությանը հայրենասիրության ոգով դաստիարակելու միջոց: Տեղեկանում ենք, որ մշակույթի նախարարությունն Արցախյան գոյամարտին մասնակից մի արվեստագետի մասին ֆիլմ պիտի նկարահանեն: Երկար փնտրությունից հետո ընտրությունն ընկել է Աղվան Մինասյանի վրա: Նախապես կինոնկարը պիտի լինի 18 րոպե, երբ նյութն ավելացավ, դարձրին 30 րոպե, ի վերջո տեսան, որ լիամետրաժ ֆիլմ պիտի ստացվի: Բայց քանի որ պետությունից հատկացված գումարը չբավականացրեց, պակասը լրացրեց Աշոտ Մինասյանը: Այս տարի «Կանթեղ»-ը կդառնա 20 տարեկան 1995-ին նրա ստեղծած բուսական-կենդանական-մշակութային հանգստյան գոտին մի հյուրընկալ ու բարեկարգ օջախ է, որ «Կանթեղ» քնարական անվանումն է կրում: «Անունը «Կանթեղ» եմ դրել, որ Սյունիքի լույսը սփռի մար-

**Շուքուր Գրիգորյան** «**զով մեկ**», – բացատրում է գրուցակիցս եւ հավելում, որ փորձել է «Կանթեղը» ձեւավորել որպէս բերդ, իսկ հյուրընկալ տնակները բերդապարիսպների տեսք ունեն: Ստեղծելով այդ համալիրը՝ Աշոտ Մինասյանը, նախեւառաջ, հավերժացրել է իր վաղամեռիկ եղբոր հիշատակը: Ավտոմայրուղուն գուրգուտու 23 եղեւնի է տնկված, որոնք խորհրդանշում են Աղվանի ապրած տարիները: Երբ դրանք տնկեցին, մոտ 20 սմ բարձրություն ունեին, այժմ յոթ-ութ մետրանոց վեհաշուք ծառեր են: «Կանթեղ»-ին կից ստեղծվել է հրաշալի այգի՝ մոտ 3000 մրգատու ծառով, իսկ կենդանաբանական այգին իրեն է ձգում մանուկներին:

Աշոտ Մինասյանը հնագիտական իրեր, առարկաներ, գործիքներ հավաքելու սիրահար է: Այստեղ ժողոված են տնայնագործական եւ գյուղատնտեսական առարկաներ, ծիսական անոթներ, դիտաքարեր, կարասներ, ջարդաքարեր, տարբեր ժամանակների զենքեր, զանազան նմուշի գորգեր: Միանգամայն հասկանալի է այս ամենը հնագիտական մուշկերի հավաքողը փրկել է անդառնալի կորուստից: Եվ հիմա խնդիրը հնագիտական-հայրենագիտական թանգարանի ստեղծումն է, որ հավաքված ցուցանմուշները ներկայացվեն «Կանթեղ»-ի այցելուներին:

«**Սիրում եմ գեղանկարչությունը, գունային զգացողություն ունեմ, զօծերի լեզվին չեմ տիրապետում, ինչը խանգարել է գեղանկարչությամբ զբաղվելուն**», փորձում է արդարանալ: Բայց, այնուամենայնիվ, գեղանկարների ուշագրավ հավաքածու ունի, որում տեղ ունեն այլուցեցի համարյա բոլոր գեղանկարիչների աշխատանքները, եւ ոչ միայն, հավաքածուն համալրում են սիսիանցի ճանաչված գեղանկարիչ (ռուսաստանաբնակ) Ջախար Խաչատրյանի, Գրիգոր Խանջյանի, ռուս գեղանկարիչներից մի քանիսի գործեր: Կազմակերպում է այլուցեցի գեղանկարիչների աշխատանքների ցուցահանդեսներ, նաեւ փոքրիկ հյուրասիրություն է լինում, որ ավելի մտերմիկ մթնոլորտում մարզի գեղանկարիչները շփվեն, կարծիքներ հայտնեն, խոսեն իրենց ստեղծագործական անելիքների մասին:

Այս ամենին հավելեց, որ Աշոտ Մինասյանը գրական փորձեր է անում՝ չափածո եւ արձակ: Նախ՝ Յանո Սահյանի քնարերգության ջերմեռանդ երկրպագու է, ոչ միայն սիրում է վերլուծել պոետի ստեղծագործությունները, այլ նաեւ նրան է ձոնել երեք բանաստեղծություն, որոնցից մեկը՝ «Դաղձի ծաղիկ» ժողովածուին նվիրվածը տպագրվել է Շշորս Դավթյանի հեղինակած «Յանո Սահյան» հանրագիտարանում: Նաեւ չափածո տողեր է նվիրում իր նահատակ ընկերների, որոնց մեջ կորստյան անհուն ցավ կա, ահավասիկ, զոհված ազատամարտիկ Արմեն Մարտիրոսյանին (Ազոյանին) ձոնվածը՝

*Ճվար մարմինը քո վեր է  
կլնում հողից,  
Ու մոտակա ժայռի  
քարերի վրա փրվում:  
Բնության մեջ այդպես  
Արծիվներն են մեռնում,  
Երբ զգում են արդեն,  
որ չեն կարող ճախրել,  
Ժայռերի ծեղկերից  
ցած են նետվում:*

Տպագրվել է շրջանային «Որոտան» թերթում, «Գարուն» ամսագրում, այժմ՝ «Անդին» ամսագրում: Չասցնում է ընթերցանությամբ զբաղվել, թե՛ ժամանակը չի բավականացնում. «Ինչպե՞ս կարող է չընթերցեմ, հայրս հայերենի ուսուցիչ էր, լուսահոգի մայրս՝ գրադարանավարուհի, երկուսն էլ ընթերցանության առունով պահանջկոտ: Մեր տանն ընդունված կարգ էր նոր

ընթերցած գիրքը քննարկել: Եվ վաղ նրան, ով գիրքն ամուշադիր կարդացած կամ մի գլուխ բաց թողած լիներ: Դա ծանր էր անդրադառնում ընտանեկան մթնոլորտի վրա... Հիմա իմ սեղանի գրքերից են նախ՝ Աստվածաշունչը, հետո Յանո Սահյանի հատորակները...»:

**Աշոտ Մինասյան ձեռներեցը**

– Դուք ոչ միայն Սիսիանում հմուտ ձեռներեցի համարում ունեք, այլև զբաղվել եք գյուղատնտեսությամբ: Ինչպե՞ս է դա ձեզ մոտ ստացվում, – անցնում են նոր թեմայի:

– Ինձ մոտ դա վատ է ստացվում, – փորձում է կատակել եւ շարունակվում, – պետք է հաշվի առնել հողերի վիճակը, ուսումնասիրել գյուղատնտեսական նախկին փորձը, ինչ են ունեցել նախկինում, ինչ մշակաբույսեր են ցանել այդ վարելահողերի վրա: Ես մեկ-մեկ սիրում եմ մտնել անծանոթ ոլորտ, ուզում եմ ներգրավվել նոր գործերի մեջ: Բայց հետո գիտակցում եմ, որ դա իմ տեղը չէ: Գուցե մարդկային իմ բնավորությամբ է պայմանավորված, որ սիրում եմ պրպտել, սիրում եմ ուսումնասիրել, հայտնաբերել նոր բաներ: Մի ձեռակերպում կա, չէ՞, մինչեւ քո մաշկի վրա չզգաս, չես կարող դա հասկանալ:

– Բայց խորհրդային տարիներին Սիսիանը հայտնի էր նաեւ հացահատիկային մշակաբույսերի արտադրությամբ, ցանքատարածությունները ոռոգելի էին դարձրել, անձրեւացման համակարգ էր գործում, – փորձում են գրուցակցիս այլ ոլորտի մեջ ներթափել:

Աշոտ Մինասյանը նրբանկատորեն ասում է, որ անկախության տարիներին Սիսիանի շրջանի ոռոգման ցանցը եւ անձրեւացման համակարգը թալանվեցին եւ փոշիացվեցին: Իսկ խորհրդային տարիներին իր տեղեկացմամբ՝ հողի մեկուորսուսում կատարեցին, այն է՝ հողերը փորձեցին մաքրել քարերից, բայց ավելի շուտ հողերը ենթարկեցին էրոզիայի, քան մշակեցին այն: Քարի հետ քշեցին-տարան բուսական շերտը: Բուսահող վերացավ: Բուսական շերտի վերականգնման համար տասնամյակներ են հարկավոր, – եզրակացնում է Ա.Մինասյանը: Այնուամենայնիվ այն հաստատ համոզմունքն ունի, որ Սիսիանի գյուղատնտեսական սեկայական ներուժը լիովին չի օգտագործվում:

**Տղերքը վերստին կմեկնես ռազմաճակատ**

Տխուր մի իրողություն. քիչ ժամանակ չի անցել, երբ հրադադար է հայտարարվել Արցախյան պատերազմում: Բայց նոր սերունդը չի կողմնորոշվում՝ ո՞վ է իրական հերոսը, ո՞վ շինծոն: Բացի դրանից, Արցախյան պատերազմն ունեցել է նվիրյալներ, ովքեր իրենց կյանքը դրել են հայրենիքի փրկության գոհասեղանին, որոնց օրինակով կարելի է ներշնչել, դաստիարակել մատաղ սերնդին: Ի՞նչ է այս մասին մտածում մերօրյա ազատամարտի քուրալով անցած զինվորը, հրամանատարը. «Դա բոլորիս ցավն է, բայց չեմ կարծում, որ մեղավոր եմ դրանում: Մենք խորհրդային դաստիարակություն ստացած մարդիկ ենք, ունեինք Նելսոն Ստեփանյան, Յուրան Ավետիսյան, բազում հերոսներ, որոնց կերպարները ներշնչել են մեզ: Ուզում եմ մի հետաքրքրական փաստ ներկայացնել մեր մանկությունից: Մեր պապերը պատերազմից վերադարձել էին միտանի, միժեռանի: Տոնական օրերին, հատկապես մայիսի 9-ին, շքանշաններով կոստյումը հագին, մեր ձեռքը բռնած այցի էին գնում Մեծ հայրենականում ընկածների հուշարձանին: Դա եւս դաստիարակություն են համարում:

Այո՛, տխուր է, որ նորանկախ մեր երկրում ազատամարտի հերոսներին չենք կարողանում հավուր պատշաճի ներկայացնել ժողովրդին, նաեւ այն, թե ինչ է կատարվել, ինչպես է կատարվել, ով ինչ է եղել: Արհեստաժից հերոսներ մեզ պետք չեն, մենք դրանք ունենք. իրական հերոսներին մեր հարգանքը պիտի մատուցենք: Այսօր ուրախ եւ հպարտ եմ, երբ որեւէ զնդի, գումարտակի ձեւավորման տարեդարձ է նշվում 15, 20-ամյակ եւ այլն, եւ ժողովուրդը ներգրավվում է դրա մեջ, բայց որ մշակույթի նախարարությունում չի ձեւավորվում համապատասխան քաղաքականություն, դա ուրիշ հարց է:

– Թաքցնելու բան չէ, կռված տղաների շրջանում որոշակի նեղացածություն կա, որ իրենք գնահատված չեն, որ սոցիալապես անպաշտպան են, եթե, Աստված մի արասցե, մարտական գործողություններ վերսկսվեն, նրանք վերստին կմեկնե՞ն ռազմադաշտ, կկանգնե՞ն սկսնակների կողքին:

– Այո՛, այն համոզմունքն ունեմ, որ եթե մի բան լինի, կռված տղերքը կմեկնեն ռազմաճակատ: Այդ ամենը տեսել եւ զգացել եմ 2014-ի օգոստոսին, երբ սահմանում իրավիճակը կտրուկ սրվեց, տղաները եկան-ցուցակագրվեցին՝ սահմանները պաշտպանող երիտասարդ զինվորների մոտ կանգնելու: Ի դեպ, տղաներ կային, ովքեր երբեք չէին ծառայել, եկան եւ ցուցակագրվեցին: Այս ամենը մոռանալ, մանավանդ ժխտել, հնարավոր չէ»:


**Քաղաքի հոգսերով մտախոգ**

Սիսիանի պատվավոր քաղաքացու համար, անշուշտ, երկրորդական չեն քաղաքի ներքաղաքական իրավիճակը, զարգացումները: Սիսիանն իր առանձնահատկությունն ունի. այն բազմաբեւեռ բնակավայր է՝ ընդգծված կուսակցական խմբավորումներով: Կարծես քաղաքացիական համերաշխությունը պակաստու է Սիսիանին: Այդպե՛ս է, իրոք:

«Նորիդային տարիներին ընդունվել եմ կոմկուսի շարքերը, – այդպես սկսեց հարցադրմանը պատասխանել Աշոտ Մինասյանը, – 1988թ. վայր եմ դրել անդամատոմս եւ ոչ մի կուսակցության չեմ անդամագրվել: Երբ աչքի ես անցկացնում տարբեր կուսակցությունների ծրագրերը, մի եզրահանգման ես գալիս, դրանք բոլորի հիմքում մեր երկրի զարգացումն է: Ի՞նչ է, առանց կուսակցական լինելու չի՞ կարելի մտածել երկրի բարգավաճման մասին: Եթե ինքը թեզ երկրի լիարժեք քաղաքացի ես համարում, պարտավոր ես անել այն, ինչ պահանջում են քո երկրի վարվա օրը, նրա ճակատագիրը: Տան անդամն ինչպե՞ս կարող է իրեն տարբեր զգալ: Մեր քաղաքն ահավոր վիճակում է, ինչի համար չեմ մեղադրում քաղաքապետին, մարզպետին: Ժողովուրդը պիտի տեր լինի եւ միասնաբար սիրի իր քաղաքը: Միայն քաղաքապետով չես կարող քաղաքը մաքուր պահել: Եթե մենք չենք ջարդում ճամփեզրի ծառը, պահպանում ենք այն, մեր քաղաքն ավելի կանաչ է դառնում: Եթե ճամփամիջի քարը չենք վերցնում-դնում ճամփեզրին, ուրեմն մեր բնակավայրի լավը չենք ցանկանում: Այսինքն բոլորս պիտի ինտեգրվենք մեր քաղաքը բարեկարգ ու ակնահաճո դարձնելու գործին:

Շարունակեմ միտքս. բոլորն ուզում են Սիսիանում տեր լինել, բայց դա ոչ մեկին չի հաջողվում: Տիրոջ զգացողությունն այլ պիտի լինի: Կուզեմ իմ քաղաքը լի-մի ամենագեղեցիկը, իմ տունը լի-մի ամենագեղեցիկը, հետո մարզը, երկիրը: Յուրաքանչյուրս պիտի օժանդակենք այն ամենին, որ ունենանք մեր երազած Սիսիանը»:

**ՎԱՐՄԱ ՕՐԲԵՆԱՆ**



Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

**Ուրիշի աչքի մեջ շյուղը փեսնելուց առաջ**

Թեմական հարցերը քննելու համար հիմք չի կարող լինել անստորագիր թուղթը, եթե անգամ այն ողողված է ահաբեկչական հայտնի միջադեպի մասին արդարացի ու սրտակեղեք հիշատակումներով

**Մեծագանգ**

Հունվարի 21-ին կայքերից մեկը լույս աշխարհի համեց հողված՝ «Ինչի՞ է ծառայում Գորիսում քահանան» վերտառությամբ, որը տեղիք տվեց որոշակի ասեկոսների ու քննարկումների, ոմանք էլ իրենց նկատառումները փոխանցեցին «Այունյաց երկրին»։ Եվ այդ ամենի արդյունքում հարկ համարեցինք որոշ դիտարկումներ անել հրապարակման մեջ բարձրացված հարցերի շուրջ։

Նախ՝ ի՞նչ է իրականում տեղի ունեցել հունվարի 21-ին Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ ըստ եկեղեցու եւ թեմի առաջնորդարանի սպասավորների։

Առավելուս ժամերգությունից հետո Գորիսի եւ տարածաշրջանի հոգևոր հովիվ Ահարոն քահանա Մելքունյանը մատուցել է հոգեհանգստյան արարողություն եւ բազմաթիվ գորիսեցիների հետ աղոթք բարձրացրել առ Աստված՝ Գյումրիում հունվարի 12-ին սպանդի զոհ դարձած Ավետիսյանների ընտանիքի անդամների հոգու հանգստության համար (հունվարի 12-ին հաջորդած կիրակիի՝ հունվարի 18-ի պատարագի ժամանակ էլ անմեղ զոհերի մասին հիշատակություն էր արվել Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում)։

Հոգեհանգստյան արարողությունից հետո՝ ժամը 13-ի սահմաններում, Գորիսի եկեղեցի էին այցելել մարդկանց նոր խմբեր։ Տեր Ահարոնը հոգեհանգստյան նոր արարողության կազմակերպումը ոչ պատշաճ է համարել, բայց ակտիվ կերպով շփվել է մարդկանց հետ։ Վերջիններս էլ մոմ են վառել եւ աղոթք բարձրացրել Ավետիսյանների համար։

Ժամը 15-ին եկեղեցում տեղի է ունեցել պսակի արարողություն՝ մոտ մեկ շաբաթ առաջ տեղի ունեցած պայմանավորվածության համաձայն։

Այդ ընթացքում տեր Ահարոն քահանա Մելքունյանին մոտեցել են

մի քանի հոգի եւ իրազեկ դարձրել, որ օրվա վերջին՝ ժամը 18-ին, բազմաթիվ գորիսեցիներ են այցելելու Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ մոմավառության եւ, բնականաբար, ակնկալում են տեր Ահարոնի միաթարական խոսքը։ Քահանան, ինչպես եւ սպասվում էր, համաձայնություն է տվել։ Դրանից հետո, սակայն, տեր Ահարոնի մոտ առողջական խնդիր է առաջացել, ինչը թույլ չի տվել նրա ներկայությունը մոմավառությանը։ Եվ նախապես խնդրել է Գորիսի զորամասի հոգևոր տարասավոր Ավետիք սարկավազին՝ միաթարական խոսք ասել մոմավառության եկածներին, ով էլ դա արել է ամենպատշաճ նվերողակով...

Իսկ որտե՞ղ էր այդ ընթացքում Այունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Յակոբյանը։ Նա գտնվում էր Եջմիածնում, որտեղ նախօրյակին մասնակցել է Թասի լեռնանցքում ավտոմեքսից զոհված իր երիտասարդ ընկերոջ ու բարեկամի հուղարկավորությամբ։ Բայց դա չի խանգարել (եւ չէր կարող խանգարել), որ հունվարի 21-ին Այունյաց թեմի բոլոր գործող եկեղեցիներում տեղի ունենան հոգեհանգստյան արարողություններ ու մոմավառություններ։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի Ավետիսյանների ընտանիքի ողբերգությունը ծանր վիշտ էր պատճառել ամեն մի ողջամիտ մարդու՝ անկախ ազգությունից։

Առհասարակ հայ ժողովրդի հոգեկերտվածքի բնորոշ զօծրից մեկը ցավի ու վշտի ժամին համախմբվելն է։ Դրա վկայությունը մեր պատմությունն է, դրան ակնատես եղանք նաեւ վերջին օրերին՝ սահմեկեցուցիչ ողբերգության առիթով։

Շատ սպոս, սակայն, որ համազգային սգո ժամին, երբ խրված էինք հույզերի ու զգացմունքների խառնարանում, նաեւ փորձեցինք ընդհանրացնումներ ու հեռուն գնացող ՇԱՐՄԱՎԱԿՈՒԹՅՈՒՆԸ էՋ 8



## Հանձնաժողովը ներկայացրեց ուսումնասիրության արդյունքները

**«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում հեպատիտ C-ով վարակի դեպքերի կապակցությամբ համաճարակային իրավիճակը ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ուսումնասիրություն կատարած հանձնաժողովն Արմեն Մուրադյանին զեկուցեց արդյունքների մասին:**

Նշվեց, որ արդեն կատարվել են հիվանդանոցում 2014թ. վիրահատված 192 հիվանդներից 68-ի և վիրահատված հիվանդների հետ առնչություն ունեցած բոլոր 27 բուժաշխատողի արյան զննությունները: Վերջնական փաստաթղթերը 2014թ. դեկտեմբերի 13-ի մոտ արձանագրվել է հեպատիտ C-ով

վարակվածություն: Նրանցից 7-ի մոտ փաստորոշվել է սուր հեպատիտ C: Վիճակագրական տվյալներով՝ սուր կլինիկական ձևերի 35-40 տոկոսի մոտ արձանագրվում է ինքնուրույն առողջացում: Բոլոր վարակակիրները գտնվում են «Նորթ» ինֆեկցիոն հիվանդանոցի մասնագետների հսկողության ներքո, բոլորի մոտ առկա է կլինիկական և բիոքիմիական լավացում: Նախարարի հանձնարարությամբ՝ յուրաքանչյուր հիվանդի համար մշակվել է գործելակարգով հաստատված բուժման սխեմա, ամիրաժեշտ փաստորոշման և դեղորայքի ցանկ:

Նախարարությունը հորդորում է 2014թ. վիրահատված մյուս քաղաքացիներին՝ մինչև փետրվարի վեր-

ջը ներկայանալ հետազոտության Քաջարանի ԲԿ կամ «Նորթ» ինֆեկցիոն հիվանդանոց:

Քաջարանի բժշկական կենտրոնի վիրահատարանի վերաբացման նպատակով Արմեն Մուրադյանը ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի» մասնագետներին հանձնարարեց կարճ ժամանակում բժշկական գործիքների, վիրահատարանի և վիրաբուժական բաժանմունքի փառասանման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումների ձեռքբերման առաջարկ ներկայացնել ԲԿ-ին և մանրակրկիտ փաստորոշում կազմակերպել: Միաժամանակ, հանձնարարեց բժշկական ծառայությունների ամփոփագությունն ապահովելու նպատակով մեկ ամիս սահմանել ամենօրյա ամենաբարձր մակարդակի հսկողություն՝ մինչև նոր պատասխանատուները լիովին կյուրացվեն գործընթացը:

**ՀՀ առողջապահության նախարարություն 30 հունվարի 2015թ.**

## Ուրիշի աչքի մեջ շյուղը փեսնելուց առաջ

**Արձագանք**  
ՍԿԻՐԸ ԵՅ 7

Եզրահանգումներ անել շատ-շատ հիմնարար արժեքների ու հարցերի վերաբերյալ (թեև նման ընդհանրացումների ու եզրահանգումների համար լուրջ հիմքեր կային ու կան): Որոշ դեպքերում էլ փորձեցինք տեղական նշանակության ինչ-ինչ խնդիրներ լուծել...

Վերոգրյալ հոդվածում (հեղինակի անուն-ազգանունը չգտանք) փորձ էր արվել գնահատական տալ եւ Սյունյաց թեմի առաջնորդին, եւ Գորիսի ու տարածաշրջանի հոգեւոր հովիվին: Եվ այդ գնահատականները կառուցված էին բացառապես հունվարի 21-ի անցուդարձի համապատկերի վրա, չնայած, ինչպես արդեն ներկայացրինք, այդ օրը Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում արտառոց ոչինչ տեղի չէր ունեցել: Ավելի ճիշտ՝ տեղի է ունեցել այն, ինչ Հայ առաքելական եկեղեցու բոլոր տաճարներում:

Սեւեք անմիջապես՝ գնահատելի է երևույթը, երբ Գորիսում համակուշարություններ հետևում են Սյունյաց թեմի գործունեությանը (եթե, իհարկե, պորթուգալացիներն անկեղծ է եղել ու պայմանավորված չի եղել որեւէ այլ շարժառիթով): Այդ բոլորով հանդերձ՝ համա-

ծայն չենք թեմի առաջնորդական տեղապահի եւ Գորիսի ու տարածաշրջանի հոգեւոր հովիվի վերաբերյալ նշված հոդվածում արտահայտված նկատառումներին, քանզի դրանք զուրկ են հիմքերից ու արհեստածին են (չենք կարծում, որ այդ հոդվածը հավատ կընծայի մյուս ընթերցողներին եւս):

Մի կողմից՝ պատշաճ չէր թեմի առաջնորդի կամ քահանաներից մեկի հետագա պաշտոնավարման հարցը դիտարկել հայտնի ողբերգության համապատկերի վրա. շատ անբնական էր դրանք միմյանց կապակցելու վարժանքը: Սյունյաց կողմից՝ եթե դա ազնիվ պորթուգալացի, անկեղծ մտահոգության դրսևորում էր, ապա պետք է (եզրակացություններ անելիս) փորք-ինչ հիշեինք Մակար վարդապետի որոշ գործեր նույնպես...

2012-ի աշնանից, երբ նա սկսեց գլխավորել Սյունյաց թեմը, Հայ առաքելական եկեղեցում որոշակիորեն բարձրացավ թեմի հեղինակությունը, վերածովեց հինգ եկեղեցի, վերանորոգվեցին ու վերանորոգվում են Աստուծո մի քանի տաճարներ, պատշաճ տեսքի բերվեց առաջնորդարանը, աշխուժացավ հոգեւոր կյանքը, կազմակերպվեցին կիրակնօրյա նոր դպրոցներ, ակտիվացավ եկեղեցի-հանրություն կապը

## Ի գիտություն

**Պատասխան խոսք**

**«Սյունյաց երկիր» այս փորձա հունվարի 15-ի համարում (N1) հրատարակվել է Ա.Ալեքսանյանի հոդվածը «Ջոնաթան Գուդմանը մինչև է՛րբ է հանդուրժելու Հրաչ Զաքարյանի գոյությունը Կապա-տուն» վերաբերությամբ:**

Հոդվածում տեղ է գտել այսպիսի արտահայտություն՝ «Իսկ ահա Կապա-նի կոմբինատի մի քանի աշխատող ու-գում են ճշտել (եւ չգիտեն ում դիմել)՝... ինչպե՞ս է ստացվել, որ կոմբինատում, Հրաչի եղբոր կողմից ընկերության անվտանգության համակարգը ղեկա-վարելու ընթացքում, գողությունները շատացել են, իսկ նա երբեք պատաս-խանողի դերում չի հայտնվել:

Հոդվածի այդ արտահայտության առնչությամբ Կապանի կոմբինատի աշխատակիցներից մեկը (ով հան-դես եկավ որպես լիազորված անձ) անհամաձայնություն է հայտնել՝ տե-ղեկացնելով, որ ԲաՖՖի Զաքարյանն ընդամենը երեք ամիս է աշխատել պա-հակային ծառայությունում՝ 2011 թվա-կանին (որից հետո ընկերությունում անցել է այլ աշխատանքի): Եվ այդ ամիսներին ընկերությունից նյութա-կան արժեք ներկայացնող ապրանքի գողություն չի գրանցվել:

«Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲ ընկերության աշխատակցի սույն պատասխանը (որ ընդունում ենք ի գիտություն) կարող էինք ընկալել իբրեւ վերոգրյալ հոդվածի նշված արտահայտության լիաժեք հերքում, եթե կոմբինատ ու համոզիչ փաստե-րով համեմատված լիներ, եթե հեղինակը չիրաժարվեր իր ամուռը հրատարակել պատասխան խոսքում:

**«Սյունյաց երկիր»**

**«Սյունյաց երկիր»**, Կապանի նախկին քաղաքապետ Արտուր Աթայանի հովանավորությամբ, պատրաստվում է ընթացիկ տարում հրատարակել հատուկ համար՝ նվիրված բոլոր ժամանակների ամենանշանավոր կապանցուն՝ Մովսես Սյունեցուն (Տաթևացուն, Խոտանացուն), ով մեր ազգային-եկեղեցական կանոնացված վերջին սուրբն էր, Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոսը, տիեզե-րահռչակ է բազմապատիկ լուսավորիչը հայոց, վերստին նորոգող ու վերած-նող Սուրբ Եջմիածնի, քաջ ռաբունապետն ու անհաղթ փիլիսոփան, ով նոր դարավերջի բացեց Հայ առաքելական եկեղեցու պատմության մեջ, ով հաջողեց պարսկական և օսմանյան գերությունների փրկագնով ազատել մոտ չորս հազար հայ մարդ:

Սույն նախաձեռնությանն աջակցելու պատրաստակամություն է հայտնել Սյունիքի մարզպետարանը:

Խմբագրությունն այդ նպատակով համագործակցում է Երեւանի Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Երեւանի պետական համալսարանի հա-մապատասխան ամբիոնների, Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի հետ: Խմբագրությունը միաժամանակ համագործակցության է հրավիրում մարզի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների համապատասխան մասնագետներին:

Խմբագրությունը նաեւ հայտարարում է գեղանկարի մրցույթ Մովսես Սյունեցու (Տաթևացու) դիմանկարի պատրաստման համար: Լավագույն գեղանկարը կզմվի հեղինակից և կներկայացվի թերթի տվյալ համարում:

**«Սյունյաց երկիր»**

**«Ջանգեզուրի պղնձամուխրեւա-յին կոմբինատ» ՓԲ ընկերության հովանավորությամբ «Սյունյաց երկիր»-ը պատրաստվում է թո-ղարկել հապուկ համար՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին:**

Նախապատրաստման շրջանակ-ներում Սյունիքի մարզպետարանը և «Սյունյաց երկիր» թերթի խմբագրու-թյունը հայտարարում են շարադրու-թյունների մրցույթ՝ «Հարյուր տարվա ցավի գույնը» վերնագրով: Մրցույթին կարող են մասնակցել

մարզի հանրակրթական, միջին մաս-նագիտական և բարձրագույն ուսում-նական հաստատությունների սովորողները:

Մրցույթի արդյունքներն ամփո-փելու վերջնաժամկետը 2015թ. մարտի 15-ն է:

Լավագույն երեք շարադրությունը կիրապարակվի Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված հատուկ հա-մարում, իսկ հեղինակները կարժա-նանան դրամական պարգևի:

*Սյունիքի մարզպետարան, «Սյունյաց երկիր»*

**Շարադրությունների մրցույթ՝ նվիրված Սեռո Խանգուդյանի ստեղծագործական ժառանգությանը**

Սյունիքի մարզպետարանը և «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը հայտարարում են շարադրությունների մրցույթ՝ «Կարողա՞ւո՞ւք Սեռո Խանգու-դյանի ստեղծագործությունները» թեմայով:

Մրցույթին կարող են մասնակցել մարզի բարձրագույն և միջնակարգ

մասնագիտական ուսումնական հաս-տատությունների, հանրակրթական դպրոցների սովորողները:

Մրցույթի արդյունքներն ամփոփելու վերջնաժամկետը 2015թ. մայիսի 1-ն է:

Լավագույն երեք շարադրությունը կիրապարակվի «Սյունյաց երկիր» թեր-թի՝ Սեռո Խանգուդյանի 100-ամյակին նվիրված հատուկ համարում, իսկ հե-ղինակները կարժանանան դրամական պարգևի:

*Սյունիքի մարզպետարան «Սյունյաց երկիր»*

**ՎԱՃԱՌՎՈՒՄ** է երեք սեմյականոց բնակարան Կապանի Թունմանյան 9 շենքի 5-րդ հարկում (թատրոնի հարեանություն): Մանրամասն տեղեկություններ համար գանգահարել (077) 062802 հեռախոսահամարով:

## Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱԿՉ  
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆՊԹԿ  
ՊԵՏՐՎԱՐԻ ԿԱՊԻՏԱԼ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 80 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Խմբագրության և հեղինակների կաթիլները կարող են չհասնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՎԱՅԴ - ՇԱՆՈՒՅՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութերը: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Սեֆ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 03.02.2015թ.: